ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Մալաթիա – Սեբաստիա սոցիալական աջակցության տարածքային բաժինը / այսուհետ՝ ՍԱՍԲ/ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով Երևանի տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է Խորհրդի անհատական կազմը ձևավորելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը Խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները (հայտերը) կարող են ներկայացնել ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Մալաթիա – Սեբաստիա ՍԱՍԲ՝ մինչև 2016թ. հուլիսի 6-ը (հասցեն՝ ք. Երևան , 0004, Անդրանիկի 125/5, 87 ՆՈՒՀ +374 10-73-98-68, Էլ հասցեն՝ malatia_ststg@norq.am)

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են .

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը.

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում, որը տրամադրվում է Սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած Կողմերին:

ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

Մալաթիա – Սեբաստիա սոցիալական աջակցության տարածքային բաժին